ք.Երևան «18» մարտի 2022թ.

«ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ «EASY WALLET» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՈՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄԱՊԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՏՎՃԱՐԻ ԱԿՑԻԱ ԱԿԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով, «Իզի Փեյ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի կանոնադրության 8.15 կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի ապրիլի 1-ից 30-ը «Urartu» (Ուրարտու) ապրանքային նշանով շահագործվող առևտրի կետում «Easy Wallet» ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային դրամապանակով վճարումների կատարման դեպքում վճարում կատարող հաշվառման հաշվի օգտատիրոջը հաշվեգրել հետվճարի գումար՝ վճարված գումարի 5 /հինգ/ տոկոսի չափով:

2. Սույն հրամանի 1-ին կետի ապահովման համար սույն հրամանի հավելվածով հաստատել հրապարակային օֆերտան:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի ապրիլի 1-ից և գործում է մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

Տնօրեն _____/ Մ.Գաբրիելյան

Կ.Տ.

Հավելված 1

«Իզի Փեյ» ՍՊԸ-ի տնօրենի 2022 թվականի մարտի 18-ի թիվ 2022/008 հրամանի

«URARTU EASY COINS» ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1.1. **«URARTU EASY COINS»** ակցիան (այսուհետ՝ Ակցիա) «Իզի Փեյ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից կազմակերպվող **«Easy Wallet»** էլեկտրոնային վճարային համակարգի (այսուհետ՝ ԷՎՀ) օգտատերերի համար անցկացվող ծրագիր է, որը նպատակ ունի խրախուսել նույնականացված օգտատերերի կողմից ԷՎՀ-ով վճարումների կատարումը և այդպիսով ընդլայնել **«Easy Wallet»** ԷՎՀ իրացվելիության մակարդակը և օգտատերերի շրջանակը:

1.2. Սույն կանոններով սահմանվում են **«Easy Wallet»** ԷՎՀ բջջային հավելվածը ներբեռնած, անձը հաստատող փաստաթղթի կամ բանկային քարտ կցելու միջոցով նույնականացված, էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվին կամ դրան կցված բանկային քարտին դրական մնացորդ ունեցող օգտատերերի կողմից «Urartu» (Ուրարտու) ապրանքային նշանով շահագործվող առևտրի կետում ԷՎՀ-ով վճարումներ կատարելու դեպքում հետվճար ստանալու կարգը և պայմանները:

1.3. Ակցիայի շրջանակներում **«Easy Wallet»** էլեկտրոնային դրամապանակը ներբեռնած, գործարկած, անձը հաստատող փաստաթղթի կամ բանկային քարտի միջոցով նույնականացված, էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվին կամ դրան կցված բանկային քարտին դրական մնացորդ ունեցող ցանկացած օգտատեր 2022 թվականի ապրիլի 1-ից 30-ը ընկած ժամանակահատվածում «Urartu» (Ուրարտու) ապրանքային նշանով շահագործվող առևտրի կետում ԷՎՀ-ի միջոցով վճարում կատարելու դեպքում կստանա հետվճարային միավորներ:

1.4. Սույն պայմաններով և կանոններով սահմանված հետվճարային միավորները հաշվարկվում են 1 միավոր = 1 ՀՀ դրամ սկզբունքով: Սույն կանոնների 1.3 կետում նշված ժամկետում և առևտրի կետում ԷՎՀ-ով կատարված յուրաքանչյուր վճարման դիմաց հաշվեգրվող հետվճարի գումարը կազմում է վճարված գումարի 5 /հինգ/ տոկոսի չափով, որը հաշվեգրվում է վճարումը կատարող օգտատիրոջ հաշվառման հաշվին՝ առցանց, սակայն ոչ ուշ տվյալ վճարումը կատարելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 23:59:59:

1.5. Սույն կանոնների 1.4 կետում նշված հետվճարը մուտքագրվում է օգտատիրոջ էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվում վարվող առանձին՝ «Easy Coins» վերնագրված ենթաբաժնում, որտեղից կարող է օգտատիրոջ հայեցողությամբ փոխանցվել հաշվառման հաշվին հասանելի դրական մնացորդին:

1.6. Ակցիային կարող են մասնակցել **«ԻԶԻ ՈՒԱԼԼԵԹ»** ԷՎՀ բջջային հավելվածը ներբեռնած, գործարկած, անձը հաստատող փաստաթղթի միջոցով նույնականացված, էլեկտրոնային

դրամապանակի հաշվառման հաշվին կամ դրան կցված բանկային քարտին դրական մնացորդ ունեցող ցանկացած օգտատեր:

1.7. Ակցիայի շրջանակներում ստացած միավորները վավեր են նաև Ակցիայի ավարտից հետո:

1.8. Սույն կանոնները կարող են միակողմանիորեն փոփոխվել Ընկերության կողմից՝ խմբագրված տարբերակը www.easypay.am կայքում հրապարակելու միջոցով:

1.9. Սույն կանոնները և նկարագրված բոլոր գործողություններն ու հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Կողմերի միջև առաջացող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվել իրավասու դատարանի քննությանը կամ Կողմերի միջև համապատասխան համաձայնության առկայության դեպքում՝ արտոնագրված հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի քննությանը:

1.10. Սույն կանոնները և Ակցիան գործում են սույն կանոնների 1.3 կետում նշված վերջնաժամկետի և սույն կանոնների 1.4 կետով սահմանված հաշվեգրման առավելագույն ժամկետների հաշվարկով: